Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

22784

331.1
U-89

АРМ
1-493а
331.1
Ա-89
Հկա 1933թ.
1-493а
ՀՍՍՀ ԳԱ

ՀԱՎԱՔԱԿԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆԻ ԲԱՆՎՈՐ-ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՅԵՎ Ճ. Տ. Ս. ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

(Տարածվում է 545 բանվոր-ծառայողի վրա)

320/40
22942

1933 ՅԵՐԵՎԱՆ

25 FEB 2013

22784

Տպագրիչների արհմիության 1938 թ. ապրիլի 5-ի վորոշումը

Արձանագրելով 1933 թ. կոլպայմանագրերի վերակնքման կամպանիայի ընթացքում ձեռք բերված նվաճումները՝ պլանների կատարման, վորակի լավացման, աշխատանքի բարձրացման և կուլտուր-կենցաղային պայմանների լավացման գործում, միաժամանակ խոշոր քաղաքական-անտեսական նշանակություն տալով 1933 թ. կոլպայմանագրերով ընդունված պարտավորությունների կատարմանը առաջարկել կենտ. վարչության անդամներին, գործարկոմ-տեղկոմներին, ցեխկոմներին, պրոֆկազմակերպիչներին և ՃՏՄ-ի անդամներին՝ ամենորյա կոնկրետ հսկողություն սահմանելու կողմերի կողմից վերցված պարտավորությունները ժամանակին և անթերի կատարման վրա, միջոցներ ձեռք առնելով առաջացած խախտումները տեղն ու տեղը վերացնելու համար։

213-87

Арм.

ՀԱՎԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Կոլպայմանագրերը լրիվ կատարելու միջոցով «վերջ դնել դիմադրությանը, արմատախիլ անել հավաքագրումը, բարելավել աշխատանքի կազմակերպումը, ճիշտ բաշխել ուժերը հիմնարկ-ձեռնարկության մեջ և բարձրացնել բանվոր-ծառայողների կուլտուր-կենցաղային պայմանները»։

ՍՏԱԼԻՆ

1. Սույն հավաքական պայմանագիրը կնքվում է մի կողմից Հայաստանի Տպագրիչների Արհմիության Պետհրատի տպարանի միացյալ գործարկոմի նախագահ ԱՐՏԱՇԵՍ ԳԾՈՒԼԻԶԱՆՅԱՆի. վորպես «պրոֆ կազմակերպություն» և մյուս կողմից՝ Պետհրատի դիրեկտորի տեղակալ Լեվոն ՈՒԱԼԻՅԱՆի ու տպարանի դիրեկտոր ԶԱՎԵՆ ՄԱՐՈՒԽՅԱՆի միջև, վորպես «ձեռնարկություն»—հետևյալի մասին.—

2. Սույն կոլպայմանագրի հիմնական

Инв. №

նպատակն է ապահովել Պետհրատի տպարանի 2-րդ հնգամյակի 1-ին տարվա, ինչպես նաև պետական հրատարակչության 1933 թ. արտադրական-տնտեսական և ֆինանսական, հրատարակչական պլանների կատարումն ու գերակատարումը: Առաջադրանքներ, վորոնք դրված են բանվոր դասակարգի և աշխատավոր մասսաների առաջ ժողովրդական տնտեսության սոց վերակառուցման, յերկրի ինդուստրացման, գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման և ընկ. Ստալինի պատմական 6 ցուցմունքների ու Համ. Կ(բ)Կ ԿՎՀ հունվարյան միացյալ պլենումի վորոշումների լիակատար իրականացման հիման վրա՝ ապահովել բանվոր դասակարգի նյութական և կուլտուր-կենցաղային վիճակի հետագա անշեղ բարելավումը:

Ցեղնելով վերոհիշյալից Պետհրատի Վարչությունը, տպարանի դիրեկցիան, գործարկոմը, բանվոր-ծառայողներն ու ՃՏՄ-ն պարտավորություն են ստանձնում լրիվ կերպով կատարել 1933 թ. արդ-ֆինպլանների քանակական և վորակական ցուցանիշները և բանվորության կողմից առաջադրված ու տնտմարմնի կողմից ընդունված հանդիպական պլաններից բղխող առաջադրությունները: Միաժամանակ խոշոր նշանակու-

թյուն տալով Հունվարյան պլենումի վորոշումների կենսագործմանը, վորակական ցուցանիշների կատարման ուղղությամբ, տպարանի բանվոր-ծառայողները պարտավոր են լավացնել ամբողջապես և բարձրացնել տպագրական արտադրանքի վորակը 1933 թ. հայտարարելով վորակի բարձրացման տարի, հետ չթողնելով քանակական ցուցանիշները:

1. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

3. Կոլպայմանագիրը կնքվում է փոխադարձ պարտավորությունների կատարման հիմունքներով և կողմերը պարտավորվում են ձեռք առնել բոլոր միջոցները, վորպեսզի առնվազն 100 տոկոսով կատարվի ընդունված պլանների հետևյալ հիմնական ցուցանիշները.—

ա) Տալ տարեկան ընդհանուր արտադրանք 1,653,297 ռ. (1932 թ. 1,475·937 ռ. դիմաց).

բ) բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը 12 տոկոսով (1932 թ. համեմատ):

գ) Բարձրացնել բանվորների միջին աշխատավարձը 4 տոկոսով:

դ) Իջեցնել արտադրանքի ինքնարժեքը —1,3 տոկոսով:

ե) Բանուժի թվական աճումը 391 մարդ (1932 թ. 363-ի դիմաց)։

4. Կողմերը պարտավորվում են 3-րդ կետում ընդունված առաջադրանքները կատարել միանձնյա ղեկավարությունն ու տնտեսաշվարկն անշեղորեն և հաստատուն կերպով կիրառելու, աշխատանքի մեքենայացման, աշխատանքի պրոցեսների կանոնավոր կազմակերպման, աշխատանքի պրոլետարական դիսցիպլինան ուժեղացնելու, աշխատավարձի վորոշ ողակներում նկատվող «ձախ» հավասարեցումը վերացնելու, դիմադրությունը հիմնովին արմատախիլ անելու միջոցով, վառելանյութի, էներգիայի, հում նյութի, թղթի, ներկերի և այլնի ոգտագործման ասպարիզում խնայողության խիստ ռեժիմ մտցնելու, ներքին ռեսուրսները և արտադրության տեխնիկական կարողությունն առավելագույն չափով հայտաբերելու ոգտագործելու միջոցով։

5. Ցնցելով արդեն աշխատանքի մեթոդ դարձած սոցմրցման ու հարվածայնության նշանարանից Պետհրատի բանվոր-ծառայողները պարտավորվում են վերջ տալ ուշացումներին, պայքարել սիմուլյացիայի և կեղծ հարվածայնության դեմ, էլ ավելի ուժեղացնելով հարվածայնությունը, կատարելով ներքին կանոնադրությամբ ընդունված բոլոր կետերը։

6. Պետհրատի վարչության և տպարանի բանվոր-ծառայողները՝ Ցերեվանի կոոպերացիայի աշխատանքները ուժեղացնելու և բանմատակարարումը կանոնավորելու համար պարտավորվում են բան-բրիգադների միջոցով խիստ հսկողություն սահմանել տպարանի փակ ճաշարանի, բուֆետի, փակ խանութի, հացի կրպակի, կոշիկի վերանորոգման արհեստանոցի և այլնի աշխատանքների վրա, իր ժամանակին մուծելով կոոպերացիայի փայավճարները։

ԾԱՆՈԹՈՒԹ.— 1. Տպարանի դիրեկցիան և գործարկոմը պարտավորվում են միջոցներ ձեռք առնել տպարանի բոլոր բանվորներին, և արտադրության մեջ աշխատող ծառայողներին կըցելու փակ խանութին և ճաշարանին։

2. Տպարանից առաջ քաշված այն ընկերները, վորոնք աշխատում են այլ հիմնարկներում այդպիսիները ճաշարանին և փակ խանութին չեն ամրացվում։

2. ԱԴՄԻՆԻՍՏՐԱՑԻԱՅԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7. Արդֆինսլանի 100 տոկոսով կատարումը ձեռնարկության կողմից ապահովե-

ու համար, տպարանի ադմինիստրացիան պարտավոր է ժամանակին միջոցներ ձեռնարկել, վորպեսզի ճիշտ կազմակերպվեն արտադրության պրոցեսները, հիմք ունենալով տնտեսական հաշվարկն ու սոցռացիոնալացումը, տպարանն ապահովելով հում նյութով (նյութ, թուղթ, ներկ, տառեր, գործիքներ, վառելանյութ և այլն)։

8. Դիրեկցիան պարտավոր է տարվա սկզբին արդիպինպլանները իր հիմնական ցուցանիշներով հասցնել ցեխերին և դաղդյահներին։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Պլանների կատարման և սոցմրցման արդյունքների մասին ադմինիստրացիան առնվազն
15 որը մեկ անգամ ցեխերի ժողովներում, բրիգադաներում, արդիսորհրդակցություններում և կոլեկտիվի ժողովներում պարտավոր է տալ ա-ռանձին դեկուցումներ։

9. Մշտական վերահսկողություն սահմանել տպարան մտնող բոլոր տեսակի ապրանքների և նյութերի վորակի վրա, նշանակելով այդ գործի համար հատուկ պատասխանատու անձ։ Վատորակության դեպքում մատակարարող որգանների դեմ խիստ միջոցներ ձեռք առնել և արդիսիների հարցը հանձնել դատախազության (համաձայն

տնտեսական հաշվարկի նկատմամբ դրություն ունեցող որենքների)։

10. Սիստեմատիկաբար կատարել հատուկ հաշվառում սոցմրցման ու հարվածայնության արդյունքների մասին, պահել տպարանի արտադրական խորհրդակցությունների, վորոշումների և առաջարկությունների հաշվառման հատուկ մատյան, այդպիսիները կատարել առանց ձգձգումների այդ աշխատանքները հանձնելով հատուկ մարդու։

11. Հարվածայինների պարգևատրման ֆոնդը ոգտագործել առանձին յեռամսյակների պլանների կատարման արդյունքները պարզելուց հետո, ֆոնդի ոգտագործումը թույլատրվում է արտադրական խորհրդակցության և գործարկոմի համաձայնությունից հետո։

12. Սմեն կերպ ոժանդակել աշխատանքի սոցիալիստական ձևերի տարածմանը (հարվածային բրիգադաներ, որինակելի արտադրանքի բրիգադաներ, տնտեսաշվարկի բրիգադներ, ցեխային և հերթային հանդիսական պլան-ոպերատիվ խմբակներ, ինքնամրցում և այլն)։

13. Տպարանի դիրեկցիան պարտավորվում է ամեն որ գործարկոմին և ցեխային կոմիտեներին ներկայացնել ցեխերի, առան-

ձին բաժինների և տարրանի պլանների կատարման վորակական ու քանակական ցուցանիշները:

14. Ամեն կերպ նպաստել, ոժանդակել և ղեկավարել գյուտ. և ռացիոնալիզացիոնների աշխատանքներին, ոգտագործելով այդ նպատակի համար նախատեսված գումարները:

3. ՃՏՍ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

15. ՃՏՍ-ն պարտավորվում է բոլոր ՃՏՍ անդամներին ընդգրկել սոցմրցման և հարվածայնության շարքերը և կնքել ինքնակոնտրակտացման պայմանագրեր:

17. ՃՏՍ-ն պարտավորվում է իր անդամների միջոցով կոնկրետ գործնական միջոցներ ձեռք առնել պլանների քանակական և վորակական ցուցանիշները կատարելու արտադրանքի տեխնիկայի բարձրացման և տեխնիկան վողջ բանվորների սեփականություն դարձնելու համար:

18. ՃՏՍ-ի անդամների արձակումը և տեղափոխումը կատարում է ադմինիստրացիան տեղեկացնելով ՃՏՍ բյուրոյին և գործարկոմին:

19. ՃՏՍ անդամները արձակվելու դեպքում մեկ ամիս առաջ պետք է գրավոր

նախազգուշացվեն: ՃՏՍ-ն ել նույնքան ժամանակ առաջ պետք է զգուշացնի ադմինիստրացիային իր կամովին հեռացվելու մասին: ՃՏՍ անդամները արտադրությանը նյութական վնաս հասցնելու պատճառով, արձակվելիս ադմինիստրացիան պարտավորվում և եքսպերտ հանձնաժողով հրավիրել իր, գործարկոմի, ՃՏՍ բյուրոյի ներկայացուցիչներից և առաջացած վնասը տեղն ու տեղը քննել:

20. ՃՏՍ բյուրոն պարտավորվում է ընդհանուր ժողովների, ընկերական դատարանների միջոցով՝ լայնորեն տուժի հասարակական միջոցներ գործադրել այն ՃՏՍ անդամների վերաբերմամբ, վորոնք թույլ կտան իրենց խախտել աշխատանքային և ներքին կանոնադրությունը:

21. ՃՏՍ անդամներն աշխատանքի ժամերին իրավունք չունեն իրենց պարտավորություններից դուրս վորևե աշխատանքով զբաղվելու՝ առանց դրա համար ադմինիստրացիայի նախնական համաձայնությունը ստանալու:

22. ՃՏՍ անդամների վորակը բարձրացնելու համար ադմինիստրացիան պարտավոր է 1933 թ. ընթացքում արտադրական եքսկուրսիայի համար նախատեսված գումարների 10 տոկոսը հատկացնել ՃՏՍ

բյուրոյին, վորն իր հերթին կկազմակերպի գործուղումներ և եքսկուրսիաներ արդյունաբերական քաղաքներում։

23. Դիրեկցիան պարտավոր է կառուցվող նոր բնակարանի սենյակների 10 տոկոսը հատկացնել ՃՏՍ-ի բնակարանազուրկ անդամներին։ Բացի այդ ՃՏՍ անդամներին կցել փակ խանութին, ճաշարանին և այլն։

24. Ադմինիստրացիան պարտավոր է իր հաշվից ՃՏՍ անդամների համար ձեռք բերել կուրորտ-սանատորիայի համար մեկ տեղ։ Բացի այդ գործարկումը պարտավոր է մյուրության կողմից հատկացված կուրորտ-սանատորյաների և հանգստյան տների տեղերի 10 տոկոսը հատկացնել ՃՏՍ-ին։

25. Ադմինիստրացիան պարտավոր է պարգևատրման ընդհանուր ֆոնդի 10 տոկոսը հատկացնել ՃՏՍ բյուրոյին ՃՏՍ անդամներին պարգևատրելու համար։

26. ՃՏՍ բյուրոն պարտավոր է ՃՏՍ անդամների միջոցով կոնկրետ միջոցներով կոնկրետ հակողություն սահմանել սույն պարտավորությունները անխախտ կերպով կատարելու համար։

4. ՐՈՒՆՎՈՐ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

27. Պետհրատի տպարանի բանվոր-ծառայողները պարտավորվում են.

ա) Կատարելապես վերացնել հարգելի պատճառներ չունեցող պարապուրդները. հիմնովին վերացնել պրոդուլները, առավելագույն չափով բարձրացնել աշխատանքի որը, լավացնել արտադրանքի, վորակը, բարձրացնելով աշխատանքային պլանները անթերի կատարելու համար։

բ) Սարքավորման ու գործիքներին խնամքով վերաբերվել, խնայողությամբ ոգտագործել այն, թույլ չտալով, վոր այդպիսիների ոգտագործումը գերազանցի պլանով ընդունված չափերը։

գ) Տպարանի ծառայողները և հաշվապահության աշխատավորները պարտավորվում են իրենց աշխատանքների թերությունները անմիջապես վերացնել, ժամանակին տալ պլանների կատարման վորակական քանակական ցուցանիշները, հաշվապահական գործերը յուրաքանչյուր ամսին և կվարտալի վերջին աժուրի բերել և ամեն ամսի 5-ին տալ նախորդ ամսվա արտադրության ինքնարժեքը։

դ) Ակտիվ կերպով մասնակցել արտադրական խորհրդակցությունների աշխատանքներին, բացի այդ ՃՏՍ-ի անդամները և վարակյալ բանվորները պարտավորվում են իրենց գիտելիքներն ու փորձը սովորեցնել բանվորական նոր կադրերին:

ե) Արհմիության անդամները պարտավորվում են որինակելի լինել ստույգ հավաքական պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման մեջ:

5. ԳՈՐԾԱՐԿՈՄԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

28. Պետհրատի միացյալ գործարկոմը պարտավորվում է հատուկ հսկողություն սահմանել կողմերի կողմից վերցրած պարտավորությունները ժամանակին կատարելու և այդ պարտավորությունների անմիջականորեն ոգնելու և ոժանդակելու: 3 ամիսը մեկ անգամ կազմակերպել մասսայական ստուգում՝ պայմանագրի լրիվ և անշեղորեն կիրառումն ապահովելու համար:

29. Աշխուժացնել արտադրական խորհրդակցությունների աշխատանքները և սիստեմատիկաբար արտխորհրդակցություններում քննության առնել պլանների կատարմանը խոչընդոտ հանդիսացող բոլոր այն խնդիրները, վորոնք կառաջանան ցեխերում կամ աշխատանքի այլ պրոցեսում:

30. Գործարկոմը հանձն է առնում բանվորության սպասարկման գործն այնպես կազմակերպել, վորպեսզի բանվորը մատակարարվի անհրաժեշտ մթերքներով և ապրանքներով: Միաժամանակ գործարկոմը պարտավոր է ուժեղացնել բանբրիգադների կոնտրոլը փակ կոոպերացիայի աշխատանքների վրա:

31. Գործարկոմը և ցեխկոմները պարտավոր են կազմակերպել լավագույն հարվածային բրիգադներ, արտադրական խմբակներ, ոնտհաշվարկի բրիգադներ (դիրեկցիայի դրլխավորությամբ) և իրենց սիստեմատիկ ու կոնկրետ ղեկավարությամբ ապահովել նրանց հետագա աշխատանքները:

32. Ապահովել բանվորների, ՃՏՍ-ի անդամների և դիրեկցիայի մասնակցությունն արտխորհրդակցություններին, ցեխային պլան-ոպերատիվ խմբակների աշխատանքներին, դլխավորելով բանվորների շարժումն ու ակտիվությունը տեխնիկան տիրապետելու գործում: Գործարկոմը պարտա-

վորվում է իր հերթին սոցմրցման ու հարվածայնության ամենորյա հաշվեառում կատարել, վորի միջոցով հրապարակ հանել կեղծ հարվածայիններին ու պրոդուլչչիկներին: Գործարկոմը հանձն է առնում դիսցիպլինան ուժեղացնելու, հոսունության դեմ պայքարելու և հարվածայնությունն ու սոցմրցումն էլ ավելի խորացնելու համար, ձեռնարկել բոլոր միջոցները և այդ ուղղությամբ մոբիլիզացիայի յենթարկել պրոֆակ տիվին և վողջ բանվոր ծառայողներին: Միաժամանակ հասարակական աղդեցության ու ընկերական-արտադրական դատարանի միջոցով պայքարել փչացումների, ուշացումների, սիմուլացիայի դեմ:

33. Համաձայն ԽՍՀՄ ԿԳԿ և ԺԿՄ-ի 1932 թ. նոյեմբերի 15-ի վորոշման պրոդուլչչիկների մասին, դիրեկցիան պարտավոր է մեկ որ պրոդուլ տվողներին հեռացնել աշխատանքից նրանցից հետ վերցնելով հացի մթերային և ճաշարանի դրքուլկնները: Միաժամանակ գործկոմը պարտավոր է այպպիսիների հարցը քննել ցեխային կամ կոլեկտիվի ընդհանուր ժողովներում հեռացնելով նրանց արհմիության և հարվածայնության շարքերից:

6. ԲԱՆՎՈՐ-ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՈՒԼՏՈՒՐԱ-ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ.

34. Ցելնելով բանվոր-ծառայողների կուլտդաստիարակչական մասսայական աշխատանքներն ուժեղացնելու անհրաժեշտությունից, Պետհրատի տպարանի դիրեկցիան պարտավոր է սույն պայմանագիրը կնքելուց անմիջապես հետո, տպարանին կից ակումբը հանձնել Տպագրիչների Միության կ. Վարչության իրավասությանը, վորը պարտավոր է կոնկրետ միջոցներ ձեռք առնել և կազմակերպել ու բարձր հիմքերի վրա դնել կուլտ-դաստիարակչական և մասսայական աշխատանքները, ակումբը ապահովելով նյութապես: Այդ առթիվ ոգտագործելով գործարկոմ-տեղկոմների կենտվարչության և տնտորգանների կողմից նախատեսված գումարները:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Ակումբից ոգտվելու իրավունք է վերապահվում Պետհրատի տպարանի, Պետհրատի վարչության, մամուլի աշխատավորների, Պետհրատի պահեստի բոլոր բանվոր-ծառայողներին:

35. Դիրեկցիան գործարկոմի պահպանությամբ

թյան և բանվոր-ծառայողների կուլտուրական պահանջները հոգալու համար հատկացնում է բաժանված բոլոր տեսակի աշխատավարձի 3 տոկոսը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Գործարկոմական և կուլտուր-կրթական տոկոսների հատկացումները կատարվում են վոչ ուշ, աշխատավարձը բաժանելուց՝ 5 որ հետո:

36. Պետհրատի վարչությունը և տպարանի դիրեկցիան պարտավորվում են 1933 թ. ընթացքում ավարտել 1931 թ. սկսած բանվորական բնակարանի 2-րդ մասի կառուցումը, բացի այդ կոնկրետ նյութական միջոցներով ոժանդակել «Տպագրիչ» բնակշինկոոպ ընկերությանը՝ 1933 թ. ընթացքում նույնպես սկսել կառուցելու «Տպագրիչ» բնակշինկոոպի 3-րդ շենքը, վորպիսիք հատկացնել բնակարանազուրկ բանվոր-ծառայողներին:

37. Կառուցվող վերոհիշյալ շենքում մանկապարտեզին հատկացնել 2 սենյակ 1933 թվականում մեկ խմբակ ևս կազմակեր պելու համար: Միաժամանակ դիրեկցիան պարտավորվում է Ֆաբզործուսի զբաղեցրած բնակշենքի 3-րդ հարկի սենյակը հատկացնել Միությանը մանկամսուր կազմակերպելու համար:

38. Պետհրատի դիրեկցիան պարտավորվում է տպարանում լույս տեսած հրատարակություններից մեկական որինակ տալ ակումբի գրադարանին, այդ առթիվ նախորոք համաձայնության գալով հրատարակությունների հետ:

Պետհրատում տպագրված բոլոր տեսակի գրքերից և ժուրնալներից բանվորներն ստանում են 50 տոկոս զեղչով՝ գործարկոմի միջոցով մեկական որինակ:

Գործարկոմը պարպավորվում է Կուսհրատի, Գյուղհրատի, Պարբհրատի և այլ հրատարակչությունների հետ առանձին համաձայնության կարգով բանվորների համար վերցնել զեղչված գներով գրականություն:

Թերթերի վրա աշխատող բանվորներին դիրեկցիան պարտավոր է տալ մեկական որինակ թերթ ձրի, այդ առթիվ համաձայնության գալով Պարբհրատի հետ:

39. Դիրեկցիան պարտավորվում է 1933 թ. ընթացքում ամբողջապես ավարտել տպարանի 3-րդ հարկի կառուցումը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Դիրեկցիան պարտավոր է 3-րդ հարկից գործարկոմի համար հատկացնել առանձին

սենյակ իր բոլոր հարմարություններով, միևնույն ժամանակ հոգալով նրա տաքացման, լուսավորման և հեռախոսի ծախքերը:

40. Բանմատակարարումը և մանդի գործը կարգավորելու համար, Պետհրատի վարչությունը, տպարանի դիրեկցիան և Մխուության կենտվարչությունը պարտավորվում են ճաշարանին և բանվոր-ծառայողներին բանջարեղենով, մթերքներով և մրգով ապահովելու համար, սույն պայմանագիրը կնքելուց անմիջապես հետո, ձեռք բերել 5 հեկտար տարածությամբ հողամաս կամ այգի, վորտեղ բացի ստացվող մթերքից՝ կազմակերպել նաև անասնաբուծություն պահելով 4 կով, 30 վոչխար, 10 խոզ, 25 ճագար և այլն:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— 1. Տնտեսությունը կազմակերպելու համար, տպարանի դիրեկցիան պարտավոր է հատկացնել 8 հազար ռուբլի, Պետհրատի վարչությունը 5 հազար ռ. Մխուության կենտվարչությունը և գործարկոմը 5 հազար ռուբլի:

2. Գործարկոմը պարտավոր է ամիսը 2 անգամ կազմակերպել չարթորյակ անտեսության մեջ աշխատելու համար: Բացի այդ գործարկոմը պարտավոր է բան-բրիգադների միջոցով ուժեղացնել հսկողությունը անտեսության աշխատանքների վրա:

3. Բացի վերոհիշյալ ձեռնարկումներից Պետհրատի վարչությունը, տպարանի դիրեկցիան և գործարկոմը պարտավորվում են գործնական միջոցներ ձեռք առնել ճաշարանը արտապլանային կարգով մթերքներով ապահովելու համար:

41. Ադմինիստրացիան պարտավորվում է բանվորների կողմից արված գյուտերը և արտադրությանը վերաբերող առաջարկները քննության առնել 3 որվա ընթացքում:

Այն գյուտարարի առաջարկությունը, վորը կընդունվի արտադրական խորհրդակցության, Գյուտարարության և ադմինիստրացիայի կողմից, գյուտարարական ֆոնդից տրվում է նրան պարգև և գյուտը պատրաստելու համար անհրաժեշտ գումար, համաձայնեցնելով այն գործարկոմի հետ:

42. Արտադրությունից պրոդուկների, սխմուլացիայի, փչացումների, հարբեցողության, մեքենաների ջարդման և անդիսցիպլինարության հետևանքով հեռացվածները վտարվում են իրենց զբաղեցրած սենյակներից արձակված որից 3 որ հետո:

43. Արտապլանային կարգով բանվոր-ծառայողներին և ՃՏՍ անդամներին սանատորիա հանգստի տներ ուղարկելու համար, Պետհրատի վարչությունը և տպարանի դիրեկցիան պարտավոր են հատկացնել 4000 ռուբլի:

44. Դիրեկցիան պարտավոր է կադրերի պատրաստման և հարվածայնության ֆոնդերից հատկացնել հատուկ գումար լավագույն հարվածային բանվորներին և ՃՏՍ անդամներին արտադրական եքսկուրսիա ուղարկելու համար:

7. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՈՒՆԵԼՆ ՈՒ ԱՐՁԱԿԵԼԸ

45. Դիրեկցիան պարտավոր է աշխատանքի ընդունել առաջին հերթին տպարանի բանվոր-ծառայողների յերեխաներին, բացառությամբ վորակյալ աշխատողներից ու մասնագետներից, վորոնց ընտրությունը կատարում է վարչությունը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Բոլոր տեսակի աշխատողների ընդունելության դեպքում, ադմինիստրացիան պարտավոր է մեկ որվա ընթացքում հայտնել գործարկոմին: Գործարկոմին իրավունք է վերապահվում յուրաքանչյուր նոր ընդունվող բանվոր-ծառայողի նկատմամբ հիմնավորված բացարկ տալու մեկ որվա ընթացքում, յեթե ադմինիստրացիան կամ վարչությունը գործարկոմի հետ չեն համաձայնվում, այն դեպքում հարցը լուծվում է կոնֆլիկտային կարգով:

46. Աշխատենդրքի 47-րդ հոդվածի ա և է կետերի հիմունքներով հաստիքի կրճատելը և արձակումը կիրառվում է գործարկոմի և միության նախնական համաձայնությամբ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Տպագրիչների Արհմիության կենտկոմի և գործարկոմի անդամների կրճատման հարցը նախորոք պետք է համաձայնեցվի գործարկոմի և կենտկոմի հետ:

47. Բոլոր դեպքերում արձակման յենթարկված աշխատակիցները փաստորեն աշխատանքից ազատված են համարվում իրենց հասանելիքներն ստանալուց հետո:

8. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺԱՄԸ

48. Պետհրատի տպարանում աշխատանքի տևողությունը սահմանվում է 7 ժամ յա բանվորական որով:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Տպարանի ծառայողներն աշխատում են 7 և կես ժամ) (հաշված հանգստի կես ժամը):

49. Տպարանում աշխատանքները կատարվում են 7 ժամով, 6 ժամ աշխատում են ցինկոգրաֆիայի տրավելչիկները:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— 1. Այն բանվորները, վորոնք աշխատում են առաջին և յերկրորդ հերթին՝ կատարելով գործարքային աշխատանք, 3-րդ հերթի փոխադրվելիս մեկ ժամ պակաս աշխատելու դիմաց ստանում են հատուցում՝ համաձայն Աշխորենագրքի 69-րդ հոդվածի: Գիշերային աշխատանքի ամեն մի ժամի համար վարձը համապատասխան չափով ավելանում է: Գիշերային մի ժամը վարձատրվում է, ինչպես ցերեկվա մի ժամի 8/7-ականը (հոդված 95):

2. Գործավարձով աշխատելիս՝ բանվորներն այդ դեպքում, բացի դոր ծավարձի հաշվով ստացված աշխատավարձից, իրենց կատեգորիայի ժամավարձի $1/8$-ականը կամ 1/5-ականը (հոդված 94—95):

50. Գիշերային աշխատողների համար, հիմնարկությունը պարտավորվում է հատ-

կացնել առանձին սենյակներ, վորտեղ հնարավոր լինի հանգստանալ մինչև աշխատանքի ացնելը, կամ աշխատանքից հետո՝ մինչև տուն գնալը:

9. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ

51. Գեահրատի տպարանի բոլոր բանվոր-ծառայողները աշխատավարձ են ստանում ժամավարձային սիստեմով: Ամսական աշխատանքի ժամերը հաշվում են 175 ժամ և աշխատավարձը բաժանվում է տրվյալ ժամերի վրա ու դուրս է բերվում մի ժամավարձը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—ա) ժամավարձով աշխատավարձ չեն ստանում վարչա-տեխնիկական անձնակազմը և գրասենյակային ծառայողները:

բ) վարչա-տեխնիկական անձնակազմի և գրասենյակային ծառայողների աշխատավարձը սահմանվում է Աշխժողկոմատի կողմից հրատարակված տարիֆ-ցանցով:

52. Տպարանում գոյություն ունեն հետևյալ յերկու տարիֆային ցանցերը.—

ա) աշակերտական, վորոնց առաջին կարգի համար վորոշվում է ամսական 25 ռ. 84 կոպեկ, իսկ մի ժամվանը՝ 14,8 կոպեկ:

Հետագա կարգերի դրույքները սահմանվում են 4 կարգանոց ցանցով 1:1,9 հարաբերականով.

Կարգ	Կոեֆիցիենտ	Մի ժամվա	Որվա	Ամսական
1	1	14,8	1—03	25—84
2	1,2	17,8	1—24	31—00
3	1,5	22,2	1—55	38—76
4	1,9	28,1	1—86	46—04

բ) բանվորական, վորոնց առաջին կարգի համար վորոշվում է ամսական—36 ռ. 92 կ., իսկ մի ժամվանը՝ 21,1 կ., հետագա կարգերի դրույքները սահմանվում են 8 կարգանոց ցանցով 1:2,8 հարաբերականով.

Կարգ	Կոեֆիցիենտ	Մի ժամվա	Որվա	Ամսական
1	1	21,1	1—48	36—92
2	1,2	25,3	1—77	44—30
3	1,45	30,6	2—04	53—53
4	1,7	35,9	2—51	62—76
5	1,95	47,2	3—08	71—98
6	2,2	46,4	3—25	81—22
7	2,5	51,1	3—69	92—20
8	2,8	52,7	4—14	103—38

ՇԱՆԹ.—Սույն տարիֆային ցանցը կիրառվում է ժամանակավոր կերպով մինչև Տպագրիչների Միության կենտկոմի կողմից ստացվող նոր տարիֆային ցանցը, վորն ստանալուց անմիջապես հետո կկիրառվի կյանքում:

53. Աշխատավարձի ու գործավարձային բոլոր այլ տեսակի վարձատրությունները կատարվում են ամիսը 2 անգամ բանվորների համար՝ վոչ ուշ ամսի 5-ին և 20-ին, իսկ մյուս աշխատակիցների համար ամսի 1-ին և 16-ին աշխատանքի մոմենտին:

54. Պետհրատում գոյություն ունեցող բոլոր ցեխի աշխատանքները բացի դրասենյակներից կատարվում են գործավարձով:

55. Դիրեկցիան պարտավորվում է շտապ կարգով վոչ ուշ մինչև մայիսի 1-ը կատարել աշխատավարձի ֆոնդի հիմնական ուսումնասիրություն ըստ առանձին ցեխերի և կատեգորիաների, առանձնացնելով գործավարձային և ժամային աշխատավարձի ֆոնդերը, վորպիսի ուսումնասիրության մշակված ոմյայների հիման վրա մինչև մայիսի մեկը վերանայել գործավարձային և ժամային աշխատավարձի դրույքները՝ աշխատավարձի 5 տոկոս լրացուցիչ ֆոնդի հաշվին առաջատար և վորակյալ պրոֆեսիաները բարձր աշխատավարձով ապահովելու «ձախ» հավասարեցման մնացորդներն իսպառ վերացնելու ուղղությամբ և այն մայիսի 16-ից կիրառելու պայմանով:

Մինչև Միության կենտկոմից նոր ատրիֆային տեղեկատուն ստանալը և աշխատավարձի ֆոնդերի վերաբաշխումը ապրանքում կիրառվում են 1932 թ. պայմանագրով ընդունված ցանցն ու դրույքները:

56. Տեխնորմիրովկան հիմնական պրոցեսների նկատմամբ ավարտել՝ ապագրական ցեխում՝ մինչև ապրիլի 1-ը, եջկապի ցեխում մինչև մայիսի 1-ը, բրոշուրովկայի և կազմարարական բաժիններում մինչև մայիսի 10-ը, վորից անմիջապես հետո անցկացնել պրոգրեսիվ գործավարձային սիստեմը: Պատրաստի նորմաները կիրառել մայիսի 20-ից, իսկ մնացած պրոցեսների նորմաները մշակել հիմնականում ավարտել մինչև հոկտեմբերի 1-ը, վորից հետո սկսել նորմիրովկան լինոտիպի և գրաշարական ցեխերում:

ԾԱՆՈԹ.— 1. Տեխնորմիրովկան չանցկացրած պրոցեսների նկատմամբ կիրառվում են գոյություն ունեցող գնահատումները, առանձին դեպքերում իրավունք վերապահելով դիրեկցիային մությանն հետ համաձայնեցնելով վերանայել տվյալ գնահատումները:

2. Պատրաստի տեխնիկական նորմաները կիրառվում են անմիջապես

պրոգրեսիվ գործավարձի հիմունքներով:

57. Փշացումների, ինչպես նաև պարապուրդների նկատմամբ կիրառվում են գոյություն ունեցող որենքները: Տեխնորմիրով կոյի գնահատումների համար սահմանվում են ապահովել տոկոսներ ցեխերը աշխատավարձի ուսումնասիրությունն ավարտելուց անմիջապես հետո և վորպես լրացուցիչ մաս կցվում են սույն պայմանագրին:

58. Ադմինիստրացիան պարտավոր է առանձին պրոցեսների նորմաներն ու գնահատումները մինչև ԳԿՀ-ի հաստատության գնելը հանձնել գործարկոմին՝ բանվորական հանձնաժողովներում, բրիգադներում և արտիորհրդակցություններում քննելու և մշակելու համար:

Գործարկոմին հանձնելուց հետո 5 որվա ընթացքում գնահատումները պետք է հաստատվեն ԳԿՀ-ի կողմից, յեթե այդ ժամանակամիջոցում գնահատումները ԳԿՀ-ի կողմից հաստատված չլինեն, ադմինիստրացիան դրանք կարող է կիրառել անկախ հաստատումից. տարաձայնությունները լուծվում են սովորական կարգով: Նոր սահմանված կամ փոփոխված նորմաները և գնահատում-

ները պետք է կիրառվեն բանվորներին հայտարարելուց 3 որ հետո միայն. բանվորը գնահատման հետ համաձայն չլինելու դեպքում վեճը լուծում է ԳԿՀ-ն այդ մասին ԳԿՀ-ին հայտարարություն տրվելուց 24 ժամվա ընթացքում, ըստ վորում բանվորն իրավունք չունի իրեն տրված աշխատանքը դադարեցնել ու չկատարել:

Եթե ԳԿՀ-ում նորմաները և գնահատումները հաստատելիս կողմերը համաձայնության չգան, աշխատանքը պետք է կատարվի ադմինիստրացիայի նշանակած նորմաներով և գնահատումներով: Այդպիսի գործերի համար տրված վճարը համարվում է կանխավճար: Վերջնական հաշվարկը կատարվում է նորմաները ԳԿՀ-ում հաստատվելուց հետո:

59. Պետհրատի տպարանի բոլոր ցեխերում բանվորական ցանցի 3-րդ կատեգորիայի մեջ մտնող բանվորները պետք է մրցանեն գործավարձային մեջ:

Գործավարձային աշխատանքը կարող է կատարվել, թե անհատական, թե բրիգադային և թե կոլեկտիվորեն: Կոլեկտիվ կամ բրիգադային աշխատանքի դեպքում խմբի աշխատավարձը բաժանվում է նրա անդամների միջև ըստ իրենց բանվորական ժամերի

քանակի աշխատանքի բնույթի և սահմանված կարգերի:

ԾԱՆՈԹ.— 1. Կոլեկտիվի կամ բրիգադի մեջ մտնողների ընտրությունը կատարում է դիրեկցիան:

2. Վնասակար արտադրության մեջ բանվորական կրճատ որով աշխատող բանվորների համար, գործավարձային գնահատումները կատարվում են նույն ձևով՝ արտադրության նորման բաժանելով նրանց կրճատված բանվորական որվա ժամերի վրա:

3. Արտաժամյանները վճարվում են դրյուբյուն ունեցող որենքի համաձայն:

60. Կատարվող աշխատանքի համեմատ դիրեկցիան բանվորներին նշանակում է տարիֆային կարգ, համաձայն Մխիթյան Կենտկոմի կարգացանցի: Բանվորը նշանակված կարգի հետ չհամաձայնվելու դեպքում, հարցը լուծվում է ԳԿՀ-ին տված հայտարարությունների կարգով:

Բանվոր-ծառայողների բարձր կարգից իջեցնելը կարող է տեղի ունենալ ԳԿՀ-ի կողմից պարզված հետևյալ դեպքերում:

ա) Եթե աշխատանքի վորակը չի հա-

մապատասխանում նշանակված կարգին և յուրաքանչյուր անպետքությունը պարզվում է սկզբնական կարգի նշանակելուց հետո, աշխատանքի ընթացքում:

բ) Կարգի իջեցման չհամաձայնող բանվոր-ծառայողը կարող է արձակվել ընդհանուր հիմունքներով ավելի ցածր կարգի փոխվելու համաձայնվողը, փոխվելու որից 15 որ տանում է նախկին աշխատավարձը:

10. ԱՇԽՈՒԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

61. Տպարանում պետք է ունենալ բավարար թվով լվացարաններ և պահանջված քանակությամբ ոճառ: Բացի այդ դիրեկցիան պարտավոր է, ֆիզիկական աշխատանք կատարող բանվորներին տալ արտհագուստներ դեկավարվելով գոյություն ունեցող նորմաներով:

ԾԱՆՈԹ.—1. Կաթը տրվում է ձուլարանի, ցինկոգրաֆիայի, լինոտիպի, ստերիոտիպի և ռոտացիոնի ու հետագայում նոր բացվելիք վնասակար ցեխերի բանվորներին:

2. Բոլոր գրաշարներին, տպագրիչներին ու կազմարարներին դիրեկցիան պարտավորվում է տալու, յուրաքանչյուր աշխատանքի որվա համար մեկական բաժակ կաթ թեթևարժեքով:

3. Բանվորների արտհագուստների ու յերեսսրբիչների լվանալու պարտականությունը դրվում է դիրեկցիայի վրա:

4. Մասնահագուստի փոխարեն դրամական հատուցում չի թույլատրվում:

62. Զեռնարկությունը պարտավոր է բոլոր բաժիններում ստեղծել առողջապահիկ պայմաններ:

Տպարանի բոլոր ցեխերում պետք է լինեն դեղարկղներ անհրաժեշտ դեղորայքով և տպարանին կից ունենալ շտապ ոգնության կայան անհրաժեշտ շտատով:

63. Տեխնիկական անվտանգության համար նախատեսված գումարներն ոգտագործել ժամանակին և այդ ուղղությամբ Աշխժողկոմատի հետ կնքել տեխնիկական անվտանգության նոր պայմանագիր 1933 թվի համար:

11. ԱՐՁԱԿՈՒՐԴՆԵՐ

64. Համաձայն Աշխատենագրքի 114-րդ հոդվածի առնվազն 5 և կես ամիս անընդհատ աշխատելու դեպքում, տպարանի բան-

վոր-ծառայողներին արձակուրդ է տրվում տարվա համար բոլորին անխտիր 12 բանոր։

№ №	ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՈՒՆԸ	Արձակուրդ. տևող.	ՄԱՆՈՒՄՆՈՒԹՅՈՒՆ
1	Գրասենյակներ	2 բար.	Սույն ցուցակում նշված 1—9 ցեխերի բանվորներին տրվում է 12 բանոր արձակուրդ վատնդակոչ տրվելու դեպքում հանձնարարության համար ԽՍՀՄ Ա.Գ.Կ № 20—21 վերջերեն (կայացած 1929 թ. Նոյեմ. Ա.Գ.Կ 29 թ. հուլիսի 1-ի № 13 վճռագիր)։
2	Տարբերակներ	»	
3	Զուլամանի բանվորներին .	»	
4	Լիմոնտիկի և մնոտակի գործ.	»	
5	Սանդրոտիկի բանվորներին	»	
6	Ցիկոնդրաֆիկի բանվորներին	»	
7	Ուռատնիկի	»	
8	Վիսորաֆիկաստ բանվորներին	»	
9	Կարմրատներին	»	
10	Տարբ. հարբարատներին	»	
11	Լբոպիտներ-սարքաստներ	»	
12	Գրատնիկի ծառայողներին	»	
13	Մեքենատիրուհիներին . . .	»	
14	Գարեջ. գառապան և ջիպաս	»	
15	Գանիսի բանվորներ, վորոնք աշխատում են 8 ժամ	»	

ԾԱՆՈԹ.—1. Այն գրասենյակային ծառայողները, վորոնք անմիջականորեն կապված են արտադրության հետ և աշխատում են այնքան, վորքան նույն ցեխի բանվորները, նման աշխատակիցները նույնպես ոգտվում են մեկ ամիս արձակուրդով։

2. Տպարանի այն պատասխանատու աշխատակիցները, վորոնց աշխատանքի ժամերը չեն չափավորված, և աշխատում են 7 ժամ և դրանից ավելի, այդպիսիները նույնպես ոգտվում են մեկ ամիս արձակուրդով։

3. Ձեռնարկությունը պարտավոր է տարեվերջին փակել բոլոր բանվոր-ծառայողների արձակուրդային հաշիվները։

4. Արձակուրդները տրվում են տարվա բոլոր ամիսներին։

65. Արձակուրդի իրավունք ունենալու համար սահմանված ժամկետից շուտ արձակվող բանվոր-ծառայողները հաշվեհարդարի ժամանակ ստանում են դրամական փոխհատուցում չոգտագործված արձակուրդի փոխարեն։

12. ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ

66. Անչափահասները ձեռնարկության մեջ կազմում են վորակյալ բանվորների ընդհանուր թվի 10 տոկոսը, վորից 30 տոկոսը պետք է լինեն կանայք:

Տպարանի չափահաս և անչափահաս բանվոր-աշակերտների թիվը լրացվում է հարվածային բանվորների և յերկարատև բանվորական ստաժ ունեցող բանվորների զավակներից:

67. Աշակերտության վորակավորման համար կիրառվում է կոլեկտիվ, բրիգադային և անհատական ուսուցման մեթոդները, վորոնց մեջ մտնում են 1—4 կարգի աշակերտական ցանցում յեղածները:

68. Դիրեկցիան և գործարկոմը պարտավորվում են յուրաքանչյուր ցեխում կազմակերպել տեխնիկան տիրապետող խմբակներ և ղեկավարել նրանց աշխատանքները:

ԾԱՆՈԹ.— Տպարանի ՃՏՍ-ն պարտավորվում է յուրաքանչյուր նոր կազմակերպված տեխնիկան տիրապետող խմբակներին տրամադրել հրահանգիչներ և դասատուներ:

69. Տպարանի դիրեկցիան պարտավոր է 1933 թ. հունիսին վորակավորման և վերավորակավորման համար կենտրոնական քաղաքներ գործուղել 6 հարվածային լավագույն բանվորների, վորի 10 տոկոսը պետք է լինեն ՃՏՍ անդամներ: Այդ հարցը նախորդը համաձայնեցնելով միության հետ:

13. ՀԱՎԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ՍՏՈՒԳԵԼՈՒ ԿԱՐԳԸ

70. Տպարանի դիրեկցիան և գործարկոմը պարտավորվում են կազմակերպել յերկկողմանի պարտավորությունների ամենորյա սիստեմատիկ ստուգում: Սույն հավաքական պայմանագիրը խախտում հայտարերող կողմը, պարտավոր է անմիջապես իրագեկ դարձնել մյուս կողմին հիշյալ խախտումը տեղնուտեղը վերացնելու համար:

71. Յուրաքանչյուր 3 ամիսը մեկ անգամ գործարկոմը և դիրեկցիան կատարում են հավաքական պայմանագրի մասսայական ստուգում:

72. Սույն հավաքական պայմանագիրը խախտելու համար, կողմերի ղեկավար աշխատակիցներից,—կոնկրետ պատճառ դարձողները յենթարկվում են քրեական պատասխանատվության (համաձայն Աշխատանքի դրքի 134-րդ հոդվածի):

Սույն պայմանագրի խախտման դեպքում յուրաքանչյուր բանվոր-ծառայող և ՃՏՍ-ի անդամ կրում են.—

ա) Դիսցիպլինար պատասխանատվություն՝ տուժացուցակի համաձայն.

բ) հասարակական պատասխանատվություն արտադրական-ընկերական դատարանի առաջ.

գ) վարչական միության անդամ իր արհկազմակերպության առաջ:

73. Սույն պայմանագիրը կնքվում է մեկ տարի ժամանակով և ուժի մեջ է մտնում 1933 թ. մարտի 1-ից մինչև 1934 թ. փետրվարի 28-ը և տարածվում է ներկայումս աշխատող և թե հետագայում նոր ընդունվող բանվոր-ծառայողների վրա:

ԾԱՆՈԹ.—1. Սույն պայմանագիրը չի տարածվում վարձման, աշխատանքից արձակելու իրավունքով ուժտված վարչական կազմի վրա:

2. Պայմանագրի կիրառման ժամանակամիջոցը կամ պայմանագրի առանձին կետերը փոփոխության կարող են յենթարկվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

74. Սույն պայմանագրի կիրառման

համար նրա մեկնաբանման հողի վրա ծագած վեճերի և կոնֆլիկտների լուծման համար Պետհրատում կազմակերպվում է ԳԿՀ: ԳԿՀ-ի կազմակերպման կարգը նրանց պարտականությունները սահմանվում են հատուկ կանոնադրությամբ:

ԾԱՆՈԹ.—1. Դիրեկցիան և գործարկոմը ԳԿՀ-ի անդամներին տալիս են համապատասխան լիազորություններ:

2. ԳԿՀ-ի նիստերը կարող են հրավիրվել նաև աշխատանքի մոմենտում (նայած գործի անհրաժեշտության):

75. Սույն հավաքական պայմանագրի կնքման ժամանակ Պետհրատի տպարանում աշխատող բանվոր-ծառայողների թիվն է 545 հոգի:

76. Սույն պայմանագրով չնախատեսված աշխատանքի բոլոր պայմանները կար-

Арм
1-493а

գավորվում են աշխատանքի այդ մասի գործող որենքներով:

77. Սույն պայմանագիրը Պետհրատի վարչության հաշվին տպագրվում է և բաժանվում բանվոր-ծառայողներին մեկական որինակ:

Հայաստանի Տպագրիչների Արհմիության Պետհրատի տպարանի միացյալ գործարկոմի նախագահ՝
Ա. ԳՅՈՒԼԻԶԱՆՅԱՆ

ՀՍԽՀ Պետհրատի դիրեկտորի տեղակալ՝
Լ. ՈՉԱՆՅԱՆ

Պետհրատի Տպարանի դիրեկտոր՝
Զ. ՄԱՐՈՒԽՅԱՆ

Սույն պայմանագիրը մշակված և հաստատված է Տպագրիչների Միության կենտ. Վարչության կողմից:

Միության նախագահ՝ Վ. ՍԱՐՈՅԱՆ

Սույն պայմանագիրը հաստատված է Երևանի Աշխատանքի բաժնի կողմից՝

Ցերաշխբաժվար՝ Ս. ԱՂԱԲԱԲՅԱՆ

2 ապրիլի 1933 թ.

Պետրատի տպարան պատվեր 812 գլ. 8408 տպագրված

А. 1933 г.

«Ազգային գրադարան»
NL0196642

Арм.
1-493а